

6082

3-36

ՊԱՏԱԽԱԳՈՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ

18

ԹԵԱԳԻՒՏԱԿՆ ԱԵՐԻ.

18

Վ. Վ. ՀԱՐՈՂՈՎ

ՄԱՐՍ ՄՈԼՈՐԱԿԸ

ՊԵՏԱՐԱՅ-ՅԵՐԵՎԱՆ

523.4

3-36

18 AUG 2006

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

18 № ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 18 20 JUL 2010

523.4

7-36

Վ. Վ. ՇԱՀՐՈՂ

Ա. Ա.

ՄԱՐՍ ՄՈԼՈՒՐԱԿԸ

1 | 3
0 | 8
0 | 2
— | 0

(Բաս նորագույն մետաղուստիքութիւնների)

Թարգմ. Շ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵԵՐԵՎԱՆ - 1928

12 MAR 2014

6088 700

Հ. Ա. Խ. Լուսնողիոմաս
Սոց. դաստիարակության գլխավոր վարչություն

ԱՐԱՋԱԲԱՆ

1924 թվին Յերկրի ու Մարսի մեծ հանդիպակացությունը ազգաբնակության լայն խավերի մեջ արտասովոր հետաքրքրություն առաջացրեց գեղի այդ մոլորակը։ 1924 թ. կատարած գիտական ուսումնասիրությունների մեծ մասը ներկայումս հրատարակված է, և կարելի յէ ամփոփել այն հետևանքները, վոր հնարավոր յեղակ ստանալ։

Սույն բրոշուրի նպատակն է՝ Մարսի մասին համառոտ և սեղմ ակնարկ տալ նորագույն հետազոտությունների հիման վրա։ Գրքույկս պարունակում է տպագրության համար վերամշակած և հարմարեցրած բովանդակությունը Մարսի մասին այն հրապարկային դասախոսությունների, վոր հաջողվել են ինձ վերջին տարիներու կարգալ։

Վերջացնելով խոսքս՝ պարագ եմ համարում խորին շնորհակալությունս հայտնել Վ. Ա. Մալցեին, վորի արժեքավոր ցուցմունքներից հաճախ ոգտվել եմ։

Վ. Շարոնով

Լենինգրադ, 1925 թ. դեկտեմբ.

Գրառեպվար 738 թ

հ. 754

Տիրաժ 3000

Գևորգատի 2-րդ տպարան

Յերևան 1928

1. ԿՅԱՆՔԸ ՀԵՌԱՎՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՎՐԱ


Մի ժամանակ կարծում եյին, վոր յերկիրն անշարժ կանգնած ե տիեզերքի կենտրոնում, իսկ արևը, լուսինը և աստղերը պտափում են նրա շուրջը:

Այդ հայացքը սերտ կապ ուներ այն արժեքի հետ, վոր ժամանակ իրեն եր վերագրում շրջապատող բնության հանդեպ: Իր գոռող անգիտությամբ նա իրեն ամենակատարյալ արարածն եր հաշվում նյութական աշխարհում, սաեղծագործության պսակը, անցողական աստիճանը կոպիտ և մահկանացու բնությունից դեպի մշտագոհ ու անմահ վագիներն ու աստվածները: Նրա՝ մարդու համար ե սաեղծված ամբողջ տիեզերքը և բնությունը: Ո՞ւմ կարող ե ծառացել արևը, յեթե վոչ իրեն լուսավորելու համար: Ինչու համար գոյություն ունեն աստղերը, յեթե վոչ նրա հայացքը գիշերը հրապուրելու համար: Իսկ, իհարկե, յերկիրը նրա բնակավայրը պետք ե ամբողջ նյութական աշխարհի կենտրոնը լինի: Անհողդողդ հանգիստ այն կետն ե նա, վորի շուրջը պտտում են յերկնքի բոլոր լուսատուները:

Անցան դարեր ու մարդկանց հայացքները փոխվեցին: Կոպերնիկոսի հանձարը հանեց յերկիրն իր անշարժ դրությունից և հավիտենական շրջանառության մեջ դրեց իր առանցքի ու արևի շուրջը: Այդպիսով տիեզերքի կենտրոնը արևը դարձավ:

Յերկիրը միայնակ չեր, յերկնքում իր անմոռունչ ձանապարհորդությունը նա կատարում է ուրիշների ընկերակցությամբ, — մութ գնդերի — մոլորակների հետ, վորոնք լուսավորվում և տաքանում են արևելք:

Այս գլուխերը հեղաշրջումն ելին վոչ միայն աստղագիտության համար, դրանք նշում ելին մարդկության աշխարհայացքի խորունկ փոփոխությունը:



Նկ. 1.

Զօլկելով իր կենտրոնական դիրքից՝ մարդկությունը հարկադրած եր հաշտվել բնության մեջ ունեցած շատ ավելի համեստ դերի հետ։ Արեի խիստ փոքրիկ ուղեկից Յերկրի բնակչության դերի հետ։

Իսկ գիտությունը շարունակում եր զարգանալ, կեպ-զերը գտավ այն որենքները, վորոնցով կատարվում եր մոլորակների շարժումը, իսկ այնուհետև անսահ նյուտոնը հայտնագործեց բոլոր լուսատուների շարժումը վարող տիեզերական ձգողականության որենքը, վոր հարկադրում ե նրանց ձգել մեկը մուսախն հորինվեց հեռադիտակ, վոր արդուն հսարավորություն տվեց տեղից շշարժվելով մոտենալ հեռավոր լուսատուներին։ Վերջապես ստիպված յեղան խոստովանվել, թե արեն ել տիեզերքի կենտրոնը չի կազմում, քանի վոր լուսաքանչյուր աստղ յերկնը վրա ինքնին վոչ պակաս վիթխարի և հզոր լուսատու յե։ Ավելի ճիշտ կլինի ասել, թե արել աստղերից մեկն ե իրոք նրա հսկայական նշանակությունը մեզ համար լոկ ան ե, վոր նա մեզ մյուսներից շատ ավելի մոտ ե։ Կասկած չկա, վոր մյուս աստղերի՝ արեների շուրջը պտտվում են մեզ համար անտեսանելի փոքրիկ ու սառած մոլորակներ։

Այդպիսով, նախկին խղճուկ աշխարհայացքը, վորով Յերկրը ներկայանում եր վորպես անշարժ, տափարակ բիթ, ամեն կողմից բյուրեղավին յերկնքի վշջապատված կեղևով, անցյալի սեփականություն դարձավ։ Տիեզերքը գուրս յեկավ մի անսահման ու դատարկ տարածություն՝ լի ցըտությամբ ու խավարով։ Գեթ յերբեմն իրարից հսկայական հեռավորության վրա նրա մեջ յերեսում են կայծեր-աստղեր անկարող ցըելու շրջապատի խավարը։ Այդ անհուն կայծերից մեկը մեր արեն ե, նրա շուրջը պտտվող փոշու հատիկներից մեկը մեր յերկիրն ե։

Վորքան չնչին ե յերեսում հիմա մարդու տեղը բնության մեջ։ Ամբողջ յերկրավին կյանքը հանդես ե գալիս իբրև խղճուկ մի բորբոս՝ մանրադիտակալին վոշեհատիկի վրա։ Իսկ մարդն այդ աննկատելի բորբոսի մի մասնիկն ե միայն, մի բջիջը։ Ահա թե ինչ դուրս յեկանը մենք, անդիտության կատաղի գոռողությամա բնու-

թիան թագավորներ անվանողներս: Ալժմ կարելի յե մի կարևոր հարց տալ, յեթե այդքան շատ յերկրներ կան, ապա չկան արդյոք տիեզերակամ բնակված ուրիշ անկյուններ: Միթե միայն յերկրի վրա յեն շարժվում ու բազմանում կենդանի արարածներ:

Հին աշխարհայացքի ժամանակ, ի հարկե, նման հարց չեր ել կարող ծագել: Յերկրը համարվում եր յեզակի, յեզակի յեր թվում նաև մարդկային ցեղը: Սակայն նոր ժամանակների հենց սկզբին, կոպերնիկոսի մահվանից 57 տարի հետո, իտալական ինկվիզիցիալի խարույկի վրա ալրվեց հռչակավոր Զորդանո Բրունոն, ալրվեց նրա համար, վոր հանդինություն ունեցավ հաստատելու, վոր իբր թե, աստղերը հեռափոր արևներ են և նրանց շուրջը պատվող մոլորակների վրա մարդիկ են ապրում: Այնուհետև այլ յերկրների բնակելի լինելը չեր դադարում հուզել մարդկանց մտքերը:

Վերացականորեն դատելով. պիտի ընդունել, վոր կենդանի արարածներ գտնվում են վոչ միայն յերկրի վրա, իսկակես վոր շատ տարորինակ կլիներ, յեթե անթիվ մոլորակների մեջ այդ արտօնությունը միայն յերկրին տրված լիներ: Վորքան ել բարդ լինեն այն պարմանները, վորոնց մեջ ծագում ե կյանքը, անոււամենայնիվ, բազմաթիվ յերկրների մեջ սակավաթիվ չպիտի լինեն այնպիսիները, վորտեղ կլանքի պարմաններն իրագործված են անկախ յերկրից և, վորտեղ հետևապես կյանքը ծաղկում ե: Ավելին ևս. մեզ անհայտ այդ մոլորակների վրա կարող են գտնվել արարածներ, վորոնք հենց զարգացմանը մեզնից շատ առաջ գնացած լինեն: Յեթե այդպիսի արտրած մեր մեջ յերեար, մենք անկարող կլինելինք հասկանալ նրա լայն զարգացած խելքի ուժը, ինչպես մի խխունջի կամ բորտի համար անհատկանալի յե մարդու գործունեյությունը: Իսկ նա, բանականության այդ հրեշը հետաքրքրությամբ կուսումնասիրեր մեզ՝ զարմանալով

մեր կառուցվածքի պարզության ու մեր կյանքի նախնականության վրա, այնպես, ինչպես մենք զարմանում ենք մի ինչ վոր բակտերիալի կամ միկրոբի վրա:

Սակայն հարցն այդպես դնել մեզ քիչ ե զարժացնում: Բավական չե մեզ հետևցնել, թե ինչ վոր տեղում, առհասարակ ուրիշ մոլորակների վրա կանք պիտի լինի: Մեզ ցանկալի յե վորոշակի համոզվել, թե վոր լուսատուների վրա յե նա փթթում և յեթե հնարավոր չե ծանոթանալ հենց իրենց բնակիչների հետ, գոնե իմանալ, թե ինչ պայմաններում են նրանք ապրում:

Յեթե այսպիսի մի նպատակ դներու լինենք, ապա պիտի թողնենք հեռավոր աստղերի աշխարհները և դառնանք յերկրի քույրերին—մոլորակներին: Նրանցից ամենահետաքրքրականն այդ տեսակետից հանդիսանում է մեր ամենամօտ հարեանը—Մարս մոլորակը, վորի յերեակացական բնակիչներն արժանացել են բարձր, գուցե իրենց վոչ-այնքան պատշաճ համբամի: Հիրավի, ով մեր որերին չի լսել կուլտուրապես բարձր ու խելացի մարսեցիների մասին:

Մարսի խելացի բնակիչների գաղափարը հավիշտակեց գրողներին, վիպակիրներին, վորոնց անսանձ յերեակալության համար այստեղ ընդարձակ տեղ կա, չե վոր մարսեցիներին ու նրանց կենցաղը, ինչպես կուզեր, կարելի յե պատկերացնել: Ուելլսը իր հոչակավոր աշխարհների կոիվը վեպի մեջ մարսեցիներին պատկերացրել ե իբրև մոխրագույն յերկխոսիկան գլխոտանիներ (սորոյ) թոշունների կտուցներով: Չի կարելի չխոսուովանել, վոր տաղանդավոր վեպակիրն այստեղ շատ քիչ յերեակայություն ե յերեան բերել. սաեղծել անհայտ ելակներ՝ յերկրային կենդանիների անդամների կոմքինացիալից շատ հին միջոց ե: Հենց այդպես են ստեղծվում հրեշները ժողովրդական զանազան հերիաթներում: Ավելի սրամիտ հանդիսացավ ֆրանսիացի մի հեղինակ, վորի գրվածքում

մարսեցիները կլոր գնդերի տեսք ունեն, ընդունակ են բաց թողնելու մարմի յուրաքանչյուր կետից յերկար վերջավորություններ և լողում են գետնից վորոշ բարձրության վրա՝ մեզանում դեռ անհայտ ուժի ոգնությամբ: Ուրիշ հեղինակներ, ինչպես որինակ Բոգդանովը, Մարսի վրա կատարյալ սոցիալական պայմաններ են պատկերացրել: Վերջապես, վերջին ժամանակները մեծ աղմուկ բարձրացրեց Տոլստոյի «Աելիտա»-ն, վոր նույնիսկ կինոյի նյութ ծառայեց:

Ալդահսով, Մարսի բնակելիության գաղափարի շուրջը զարգացավ յերեակալայական ամբողջ մի գրականություն, և այդ հաջող թե անհաջող հնարովի կուտի մեջ դժվար ե վորոնել ճշմարտությունը:

Բայց ինչ ե ասում այդ մասին գիտությունը, վորն ե գիտության ու յերեակալայության սահմանն այդ հարցում: Հենց այդ ել կաշխատենք մենք պարզել այս գրքույկում:

2. ՄԱՐՍ ՄՈԼՈՐԱԿԸ

Տեսէլ եք դուք յերբեքցե Մարսը: Յեթե այս, ապա հավանորեն չեք իմացել, վոր այն սովորական, արտաքինով կարմրավուն աստղն ե հենց այդ նշանավոր լուսատուն: Պետք ե ծանոթ լինել համաստեղությունների ձեւերին, Մարսը շրջապատի աստղերի մեջ ճանաչելու համար: Պատերազմի աստծու անունը այդ մոլորակն ստացել ե յուր կարմիր գույնի համար, վորը արյուն, կրակ ու բոց ե հիշեցնում:

Ի միջի ալոց, Մարսի նմանվելը աստղերին միայն արտաքուստ ե: Աստղերը հեռավոր, հսկայական արեներ են, մինչդեռ Մարսը միայն փոքրիկ և մեզ մոտիկ մոլորակ ե: Իր մյուս յեղբարակիցների նման նա իր սեփական լույսը չունի, այլ փայտում ե ուրիշի հաշվին, արտացոլելով իր բարերար Արեփ ճառագալթները: Իսկ

մենք յերկնքի վրա ամեն մի փայլող կետ տրամադիր ենք աստղ համարելու: Քարերը, վորոնք ուժգին թափով ներս են թռչում մեր մթնոլորտը և այստեղ շփումից այրվում, մենք նույնպես անվանում ենք «վայր ընկնող աստղեր», թեև այստեղ վոչ մի նմանություն չունեն նրանք:

Մոլորակների արտաքին տարբերությունն աստղերից այն ե, վոր նրանք գանգաղորեն շարժվում են յերկնքի վրայով, մինչդեռ աստղերն անշարժ են, գոնե թլուուցիկ ուսումնասիրության գեպքում: Ճշմարիտ ե, նրանք, ելելով յերկնքի արևելյան կողմից ու իջնելով արևմտյան կողմը, գանգաղ լողում են մեր վրայով, սակայն այդ կատարվում ե այն պատճառով, վոր մենք պտտվում ենք մեր Յերկրի հետ միասին: Իսկ նրանց վոխադարձ հեռավորությունն ու համաստեղությանց արտաքին կերպարանքը դարերի ու հազարավոր տարիների ընթացքում անփոփոխ են մնում: Ընդհակառակը, յեթե վորոշելու լինենք Մարսի դիրքն աստղերի մեջ այսոր և մեկ ամիս անց, ապա կը պարզգի, վոր նա զգալիորեն շարժվել ե իր տեղից և թողնելով այն աստղերը, վորոնց ընկերակցության մեջ եր յեղել մեկ ամիս առաջ, տեղափոխվել ե ուրիշ համաստեղություն: «Մոլորակներն» ստացել են իրենց այդ անունը, վոր հայերեն նշանակում ե «մոլորվող», հենց աստղերի արանքով իրենց անդադրում սողոսկելու համար:

Յեթե նկարենք Մարսի տեսանելի ճանապարհը յերկնքի վրա, կստանանք մի բավականին անկանոն կոր հանգուց: Դա հետեւանք ե այն բանի, վոր մենք թռչող Մարսը շարժվող յերկրից ենք տեսնում: Իրականում Մարսը լինչպես և Յերկիրը, պտտվում ե Արեփ շուրջը: Սակայն Մարսը գտնվում ե կենտրոնական ոջախից ավելի հեռու, քան Յերկիրը. այն ե՝ Արեփց մինչև Յերկիրը մոտավորապես 140 միլիոն կիլոմ. ե, իսկ մինչև Մարսը՝ մոտ 200 միլիոն, այնպես վոր Մարսը $1\frac{1}{2}$ անգամ հեռու յե: Ուստի ե այն պտույտը, վոր նա կատարում ե, ավելի մեծ ե:

Բացի այդ, Մարսն ընթանում ե իր ճանապարհը վոչ այնքան արագ, ինչպես Յերկիրը, Հետևաբար, նա կատարում է Արևի շուրջը լրիվ շրջան 687 որում, Յերկիրը շրջում ե այդ ճանապարհը 365 որում։ Ուրեմն Մարսի տարին համարյա կրկնակի յերկար ե մերինից։

Ի՞նչ տարածություն ե բաժանում մեզ Մարսից։ Քանի վոր յերկիրն ել, Մարսն ել պտտվում են, նրանց միջև գտնված տարածությունն անընդհատ փոխվում ե։ Նկար 1-ի վրա ցուց ե տպած յերկու մոլորակների որբիտների (ճանապարհների) դասավորությունը։ Յերկիրը գտնվում ե Բ. կետում, իսկ Մարսը՝ Դ., նրանց մեջ յեղած տարածությունը շատ մեծ ե։ Մարսը գտնվում ե այն ժամանակ Արևի յետեր և նա բոլորովին չի յերեսում։ Իսկ յեթե յերկու մոլորակներն ել հանդիպում են Արևի միննույն կողմում, ինչպես որինակ Ա. և Բ. կետերում, ապա նրանց մեջ գտնված տարածությունը շատ ավելի փոքր ե լինում, որինակի համար 80 միլիոն կիլոմ.։ Այդ դիրքը, ինչպիսին ե Ա. Բ, յերբ յերկիրը կանգնում ե Մարսի ու Արևի մեջ, կոչվում է Մարսի հանդիպակացություն։ Այդ ժամանակ նա կանգնած ե յերկնքի վրա Արևին հակադիր կետում, յերեսում ե գիշերային ժամերին և շատ հարմար ե գիտելու համար։

Յերկիրը և Մարսը շարժվում են իրենց ճանապարհներով մի ևնույն ուղղությամբ, իսկ յերկիրը, ինչպես առված ե, իր շրջանն ավելի արագ ե լրացնում։ Այդ պատճառով նա համնում և անցնում ե Մարսին, ըստ վորում ամեն անգամ, յերբ կատարվում ե այդ, տեղի յեւ ունենում Մարսի հանդիպակացություն և վերջինս լավ յերեսում ե։ Այդպիսի հանդիպումներ տեղի ունեն ժամանակի կանոնավոր ընդմիջումներով, — յերկու տարվա և յերկու ամօվա ընթացքում։


Սակայն, բոլոր հանդիպակացությունները միատեսակ բարեհաջող չեն դիտելու համար։ Յերկիր ճանապարհները,

մանավանդ Մարսինը, այնքան ել ճիշտ շրջաններ չեն։ Դրանք թեթև կերպով յերկարացած ու ձգված կորություններ են, վորոնք ելիպսներ են կոչվում, այն ել պետք ե ասել, վոր Արևը տեղափորված ե կորության վոչ թե կենտրոնում, չայլ մի քիչ կողքից։ Յեթե Յերկիրն ու Մարսը հանդիպում են այնտեղ, ուր նրանց ճանապարհներն անցնում են մեկը մյուսից հեռու (Յ և Դ. նայել նկար 1), ապա նրանց մեջ յեղած տարածությունը գուրս ե գալիս 100 միլիոն կիլոմետր։ Յեթե յերկու մոլորակները պատահում են այնպիսի կետում, վորտեղ նրանց ճանապարհներն ամենամուլիկն են լինում, ապա Մարսը մեզնից ընդգամեն 60 միլիոն կիլոմետրի վրա յեւ լինում։ Այդպիսի հանդիպակացությունը կոչվում ե մեծ հանդիպակացություն և տեղի յեւ ունենում յուրաքանչյուր 15—16 տարին մեկ անգամ։ Ի հարկե, 60 միլիոն կիլոմետրն ել բավականին տարածություն ե, սակայն ուրիշ լուսատունների հեռավորության համեմատությամբ, բավական մոտիկ ե այդ։ Լուսնից հետո, Մարսը, յուր հանդիպակացության ժամանակ, ամենամոտ լուսատուն ե։

1924 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ հանդիպակացություն, վորը կարելի յեւ «մեծերից մեծագույնը» անվանել. Այդ տեղի ունեցավ ճանապարհների ամենահամարական կետում, յերբ մինչև Մարսը յեղած տարածությունը 55 միլիոն կիլոմետր եր։ Դեռ յերբեք, հեռադիտակի գյուտի որից, Մարսն այդպես մոտ չեր յեղել։ Զարմանալի չե, վոր շատ աստղադիտարաններ նախորոք յերկար ժամանակ պատրաստվում ելին դիտելու։ Պիտի ասել, վոր նրանց ջանքերն իզուր չանցան։ Հաջողվեց աշքի ընկնող արդիունքներ ստանալ, վոր մենք ստորև կշշավենք։

Մարսը մեծությամբ Յերկրից յետ ե մնում։ Նրա տրամագիծը Յերկրի տրամագիծից յերկու անգամ փոքր ե։ Մագալով Յերկրից կարելի յեւ շինել հենց 8 այդպիսի գունդ, ինչպիսին Մարսն ե, իսկ կշիռով—10-ը։

Յերկիրը մեկ լուսին ունի, իսկ Մարսը՝ յերկու։ Այդ յերկուսն ել խիստ փոքր են, 10—15 վերստ տրամագծով, այնպես վոր, «աշխարհներ» ել նրանց անվանել չի կարելի։



Նկ. 2.

Հետևապես, մենք նախանձելու բան չունենք, թեև մենք միայն մի լուսին ունենք, բայց կարգին լուսատու յե։ Նրա տրամագիծը Մարսի տրամագիծը միայն յերկու անգամ է փոքր։ Յեթե Մարսին նայենք հեռադիտակով, ապա նա, մոտենալով շնորհիվ խոշորացման, կերևա ինչպես կարմրավունգեղին գույնի մի շրջան։ Մայրին մոտ վորեա տեղում կփայլի պայծառ մի սպիտակ կետ։ Յեթե ուշա-

դիր նայենք, ապա կարելի յե վորոշել շագանակավուն, կանաչավուն գույների յերանգներն ունեցող մութ կետեր։ Նրանց ձեն անկանոն և վոլորուն եւ։

Նայենք Մարսին մեկ ել մի քանի ժամ հետո։ Մենք իսկուն կնկատենք, վոր նրա վրայի մթին կետերը վորիվել են, այն կետերը, վոր կենտրոնում ելին, շարժվել են դեպի ծայրը, իսկ նրանց տեղ յեկել են նորերը։ Յեթե մարդ նեղություն կրի մոլորակն անդադար դիտելու, ապա պարզ կինի, թե բանն ինչումն եւ, ինչպես մեր Յերկիրը, այդ հեռավոր աշխարհն ել պտտվում եր առանցքի շուրջը։ Բծերը դուրս են պրծնում մի ծայրից, կտրում սկավառակը և ծածկվում մյուս ծայրի յետեր։

Բացառություն ե կազմում փալուն բիծը։ Նա կարծեաթե չի մասնակցում ընդհանուր պտույտին, մնալով միևնուն տեղում։ Ինչով պետք ե այդ բացաարել։ Հարցը պարզ ե։ սպիտակ բծերը գտնվում են հենց Մարսի բևեռին։ Պետք ե հիշել, վոր բեմենելու կոչվում են մոլորակների այն կետերը, վորտեղից նրանց կտրում ե առանցքը (ի հարկեակայական)։ Ամեն ինչ պտտվում ե Բեեռի շուրջը, իսկ ինքն անշարժ ե։ Մարսի սպիտակ բծերը արդպես ել կոչվում են՝ «բեմենային բծեր», կամ «բեմենային գըսկեներ»։

Մարսը լրիվ շրջան
կամ պտույտ կտտարում
ե 24 ժ. 40 րոպեյում,
այնպես վոր նրա լրիվ
որը 40 րոպեյով մեզնից
յերկար ե։ Յեթե ուշա-
դրության առնենք Արեի
շուրջը կտտարած պտույ-
տի ժամանակամիջոցը,
ապա կը տեսնենք, վոր Մարսի տարին Մարսյան 668 լրիվ
որ ունի։



Նկ. 3.

Մարսի պտույտի առանցքը, Յերկրի առանցքի նման,
Արեւ շուրջն անցած իր ճանապարհի կողմն և թեքված:
Մինչև իսկ այդ թեքության սեծությունը զրեթե ճշտո-
րեն հավասար ե յերկրային առանցքի թեքության և գլո-
ւովում ե (տարբեր վորոշումներով) 23° և 24° միջև։ Նշա-
նակում ե՝ Մարսի վրա, ինչպես և մեզ մոտ Յերկրի վրա,
տարվա յեղանակներ են լինում։ Յերկար որերով ամառը
փոխվում է աշնան, իսկ հետո սկսվում է յերկար ու ձիգ
գիշերներով ձմեռը, վորպեսզի մատադ գարնանից հետո
փոխարինվի ամառով։ Գիտենալով առանցքի դիրքը, մենք
կարող ենք հաշվել, թե Մարսի այս կամ այն կիսագըն-
դում ավալ վայրկյանին տարվա վեր յեղանակն ե։ Հի-
շեցե՛ք, վոր այդ միշտ հակառակն ե լինում, այնպես վոր
յերբ մեկ կիսագնդում ամառ ե, ապա մյուսում՝ ձմեռ և այն։
Առաջիկայում, խոսելով տարվա յեղանակների մասին
Մարսի վրա, մենք մշտապես նկատի կատնենք Մարսի
ձմեռը, ամառը, աշուն և այն։ Յերկրի յեղանակների հետ
նրանք, ի հարկե, ըստ ժամանակի չեն զուգաղիպում։

3. ՄԱՐՍԻ ԿԼԻՄԱՆ

Տարվա յեղանակների փոփոխությունը, վորի մասին
մենք խոսեցինք անցած գլխում, աղջում և ամենից առաջ
սպիտակ գտակների վրա, վորոնք ծածկում են Մարսի
բևեռները։ Յերբ վոր բևեռային այդ բժի համար գարուն
և սկսվում, ապա այդ բժին սկսում և արագ կերպով
պակասել, կարծես հալչում ե։ Ամառվա վերջը՝ նա խիստ
փոքրանում ե, յերբեմն մինչև անգամ բոլորովին անհե-
տանում ե։ Իսկ միաժամանակ հակառակ բևեռի վրայի
բիծն (այնտեղ ձմեռ ե) աճում և ընդարձակվում ե։ Ապա
բևեռները փոխում են իրենց դերը և առաջինում բիծն
սկսում ե աճել, իսկ յերկրորդում—հալվել։ Ի՞նչ բան են
այդ բժերը։ Ըսթերցողը հավանորեն արդեն վճռեց, վոր

այդ ձյուն ե։ Զե վոր մեզ մոտ յերկրի վրա նման բան է
տեղի ունենում։ Մայիսակ ձյան սականը, վորը ձմռա-
նը պարուրում ե մեր բոլոր հուսիսային յերկիրները, գար-
նանային արեգակի ճառագայթերի տակ սկսում ե հալչել.
աստիճանաբար նա յետ և քաշվում դեպի հուսիս, մինչև
վերջապես տաքը քշում ե նրան հեռավոր բևեռային յեր-
կիրները։ Իսկ աշնանը նա նորից ե վրա հասնում՝ միշտ
նորանոր տարածություններ գրավելով։

Մական վորոշ գիտնականներ կասկածում ենին, թե
բևեռային բժերի նյութը ձյուն ե։ Բանն այն ե, վոր
Մարսը $1\frac{1}{2}$ անգամ արեկից ավելի հեռու յե, քան յերկի-
րը, ուստի և նա ստանում ե միայն $40^{\circ}/_{\circ}$, այն ե կիսից
պակաս այն ջերմության ու լույսի քանակի, վոր մենք
ունենք։ Ուստի կարելի յե սպասել, թե այնտեղ միշտ
տիրում ե այնպիսի կատաղի ցուրտ, վոր ձյունը նույն
իսկ ամառը չեր կարող հալվել։ Մատնանշում ելին ած-
խաթթուն, անտեսանելի մի գաղ, վոր ստացվում ե ար-
տաշնչման և այրման ժամանակ, վորպես մի նյութ, վոր
խիստ ցրտի ժամանակ՝ 79° զերոյից ցած—պնդանում ե
և ձյան և նմանվում։ Յեթե Մարսի վրա խիստ սառնա-
մանիք ե, ապա բևեռային բժերը կարող ելին այդ նյու-
թից կազմված լինել։

Ի պատասխան դրան՝ Մարսի նշանավոր հետազոտող
Լովելը մատնանշեց մի կարևոր համագամանք, վոր առաջ
հաշվի չելին առնում։ Հենց այն ճառագայթները, վոր ըս-
տանում ե մոլորակը, բաժանվում են յերկու մասի։ Նը-
րանց մի մասը յետ և անդրադառնում տիեզերական տա-
րածության մեջ, իսկ մյուսը մոլորակը կլանում ե և դրա-
նով ջերմանում։ Բայց ճառագայթները յուրացնելու և անդ-
րադառնելու ընդունակությունը մոլորակների մոտ
միատեսակ չե։ այդպես՝ Յերկիրն անդրադառնում ե իր
վրա ընկած ճառագայթների $\frac{3}{4}$ -ը, իսկ Մարսը՝ միայն
 $\frac{1}{4}$ -ը։ Հետեւապես Յերկիրը՝ Արևից շատ ջերմություն ըս-

տանալով, շուալաբար ցրում ե այդ ջերմությունն ամեն կողմ, մինչդեռ համեստ Մարսը խնայողությամբ կառավարվում ե այն քիչ լուսով, վոր նրան տրված ե: Դրա հետևանքով յերկու մոլորակների ջերմությունն այնքան ել խիստ տարբերություն չունի, վորքան կարելի յեր ըսպասել:

Մի այլ հանգամանք ևս կա հոգուտ այն բանի, վոր քեվեռալին գտակի նյութը սառած ջուր ե: Յերբ գտակը հալչում ե, ապա նրա շուրջը կազմվում ե մոխրագույն շերտ, վորը հետեւում ե նրան, յերբ նյութը նվազում ե: Այդ շերտը հավանորեն հալված ջուր ե: Մինչդեռ ածխաթթուն պինդ վիճակից անցնում ե ուղղակի գազայինի, առանց հեղուկ դառնալու:

Այդ բոլոր յենթագրություններն ու գուշակությունները 1924 թվից ավելորդ դարձան, բանի վոր անցյալ հանդիպակացության ժամանակ հաջողվեց Մարսի վրա տիրող ջերմության անմիջական չափում կատարել: Ի՞նչպես արին այդ: Չե վոր մենք անկարող ենք մեր ջերմաշափների գնդիկները հասցնել այդ մոլորակին:

Արևը տաքացնում ե Մարսի մակերեսը: Իսկ տաքացած մարմինն ինքն արձակում ե ջերմություն: Այդ պատճառով, Մարսն ուղարկում ե մեզ յերկու տեսակի ջերմություն. 1. Արևի՝ անդրադարձած ճառագայթներ և 2. յուր ջերմացած մակերեսի տաքությունը: Յեթե ամբողջ ջերմության քանակը, վորը գալիս ե նրանից, չափենք և հաշվենք, թե նրա սեղ արևից անդրադարձ վորքան ճառագայթներ են պարունակվում, ապա պարզ կլինի, թե վորքան ճառագայթ ե ուղարկում մոլորակի ջերմացած հողը: Իսկ առարկայի արձակած ճառագայթների ուժն ու բնույթն իմանալով, կարելի յե հաշվել նաև նրա ջերմությունը: Պիտի նկատել, վոր այդ ճառագայթով ստացած թվերը բավական անվտանելի յեն: Բանն այն ե, վոր մենք չգիտենք՝ ինչ նյութերից ե կազմված Մարսի մակերեսը և,

հետեւաբար, ճշտորեն մեզ հայտնի չե արեկի ջերմությունն անդրադարձնելու նրա ընդունակությունը: Բացի այդ, ճառագայթները յերկու անդամ պիտի անցնեն Մարսի մըթնոլորտով, վորի բաղադրությունն ու հատկությունը մեզ նույնպես հայտնի չեն: Այդ պատճառով ժամանակի ընթացքում ստացած ջերմությունները կարող են փոխվել:

Մոլորակի ճառագայթների ուժի չափումն այնքան ել հեշտ գործ չե: շատ ե տաքացնում, արդյոք, վորքը աստղը: Միայն վերջին ժամանակներս հաջողվեց բավական նուրբ գործիք շինել այդ խնդիրն իրագործելու համար: Նրանք շինվում են հետեւալ կերպով: Խողովակի տեսողության շրջանում տեղավորում են վորքըիկ տերմոելեմենտ—մի գործիք, վորի մեջ ջերմության ազդեցության տակ ելեկտրական հոսանք ե առաջանում: Դիտողը խողովակի մեջ տեսնում ե սիածամանակ Մարսը և տերմոելեմենտը—վորքըիկ գնդիկի ձեզով: Այդ գնդիկը դնում են մոլորակի այս կամ այն տեղի դիմաց: Առաջանում ե ելեքտրական հոսանք, վորի ուժով դատում են ճառագայթների ուժի մասին: Տարբեր մետաղներից թիթեղները, վորոնք դրված են գործիքի առաջ, հնարավորություն են տալիս ջոկելու և չափելու այս կամ այն տեսակի ճառագայթները: Այսպիսի գործիքի զգայնությունն այնքան մեծ ե, վոր նա նշում ե ջերմության մեկ միլիոներորդ աստիճանը:

Այդ գործիքից մեկը զրված եր աշխարհիս մեջ ամենամեծ՝ 100 ժամանաշափանոց հեռադիտակի վրա, վորը պատկանում եր Մոռնտ Վիլսոն աստղադիտարանին՝ Կալիֆորնիայում: Նրա միջոցով աստղագետներ Նիկոլոսը և Պետրոսը գտան, վոր Մարսի հասարակածի վրա ջերմությունը հավասար ե $+7^{\circ}$ (կեսորին), իսկ բևռում՝ -68° : Հետո համեմատելով սկավառակի արևմտյան և արևելյան ծայրերը, յեկան այն յեղակացության, վոր Մարսի վրա առաջարկան և յերեկոյան ջերմությունը նույնն ե: Այս յեղակացությունը, յեթե ճշտվեր, կնշա-

նակեր, վոր այնտեղ վնչ ջուր և վոչ ել ող կա. շե վոր Յերկրի վրա յերեկոյան առավոտվանից տաք ե՞ շնորհիվ միան ծովի և սթնոլորտի մեղմացնող ազդեցության, Այդպիսով, այն մոլորակը, վորի վրա մարդը կեսդարյան շրջանի ընթացքում կյանքի հետքեր և վորոնում և նույնիսկ յերազում ե գտնել իր նմաններին, մեռած անապատ կիներ: Բարեբախտաբար արդ անմիխթար յեզրակացությունը չձավեց: Աստղագետներ կորլենցը և Լապլանը, վորոնք աշխատում ելին Լովելի աստղադիտարանում և իրենց տրամադրության տակ շատ ավելի նրբորեն չափող գործիք ունեցին, ալլ, շատ նշանավոր հետեւանքների հասան: Դրանք հետեւալներն են.

Մարսի հասարակածի վրա շիկագույն տարածությունները կեսորին^{+5°} ջերմություն ունեն: Մուգ բծերը մի քիչ ավելի տաք են և մինչև^{+10°}—^{+20°} ջերմություն ունեն: Հասարակածի համար բավական զով ե այս: Յերեկոյան ավելի ցուրտ ե լինում և ջերմաստիճանն ընկնում ե մինչև 0° : Ամբողջ գիշերը ուսունամանիքը խստանում ե և լուսադեմին հասնում սոսկալի թվի՝ -45 և այդ լինում ե մոլորակի ամենից տաք գոտում:

Մարսի հյուսիսային կիսագնդում դիտելու ժամանակ ձմեռ եր, և այնտեղ կանգնած եր միատեսակ ջերմություն՝ 70° :

Հարավային կիսագնդում ամառ եր: Գարնանն այնտեղ նկատվել ե շատ ցածր ջերմություն՝ մոտ՝ 60° . Հարավանորեն այդ վերաբերում ե վոչ իրեն՝ հողին, ալլ ամպերի կամ մառախուզի շերտին, վորը պատում ե բնեուային շրջանը: Ամառը մոտենալիս, ջերմաստիճանն արագորեն բարձրանում ե և ամառային արևադարձից հետո հասնում $+10^{\circ}$, իսկ հետո և $+15^{\circ}$, վորին ընթացակցում եր ձյան սաստիկ հալչումը:

Մենք տեսնում ենք, վոր ընդհանրապես Մարսի վրա զգալի չափով ավելի ցուրտ ե, քան Յերկրի վրա,

բայց և այնպես ամառն այնտեղ բավական տաք ե սառցի հալչելու համար: Այդպես, բեվեռային բծերն իրոք կազմված են սառած ջրից:

Նիմա մենք դառնանք Մարսի սթնոլորտի զննության: Վոր մթնոլորտ գոյություն ունի, այդ հետեւում ե նրանից, վոր այնտեղ հեղուկ ջուր կա: Ֆիզիկայից հականի յե, վոր բացարձակ դատարկության մեջ հեղուկ գոյություն ունենալ չի կարող. զգսպվելով արտաքին ճնշումից վարկենապես կգոլորշիանա այն:

Սակայն սթնոլորտը կարելի յե յերկան հանել ավելի շոշափելի կերպով: Նախ սկավառակի ծալրին բծերը և ուրիշ մանրամասնությունները սքողված և վողողված են: Այդ կարող ե լինել սիայն այն պատճառով, վոր ծալրին մենք նրանց վրա նայում ենք ողի հաստ շերտի միջով: Այսուհետեւ, Մարսը մեզ միշտ կլոր չի յերեւում. մի փոքր դառնալով դեպի մեզ իր մութ չյուռավորված կիսով, նա յերեւում ե փոքր ինչ տափակացած մի կողքից ինչպես լուսինը նվազ քան շրջանում: Սակայն լուսնի լույսի ու ստվերի սահմանը շատ վորոշ ե, կարծես մեջտեղից կտրած: Իսկ Մարսի տափակացած կողմը վողողված և սքողված տեսք ունի, այնտեղ լույսն աստիճանաբար և մթան փոխվում: Ուրիշ խոսքով, գիշերին Մարսի վրա ինչպես և Յերկրի վրա զորշ մթնշատ ե նախորդում: Իսկ մթնշատն առաջանում ե մթնոլորտից, վորը լուսավորված ե մնում նաև արել մայր մտնելուց հետո: Այդպիսով մթնոլորտի ներկայությունը Մարսի վրա ապացուցված ե: Ավելի դժվար ե վորոշել նրա չափը: Բոլոր գիտնականները միմյանց հետ համաձայն են այն բանում, վոր Մարսի վրա ավելի քեշ ող կա, քան Յերկրի վրա: Աստղագետ Ռայսը, 1924 թ. լուսանկարելով Մարսը գունավոր ապակիների միջով, գտավ, վոր նրան շրջապատող ողի շերտը 100 կիլոմետրից ավելի հաստ չե: Լովելը կարծում եր, վոր Մարսի լուրաքանչյուր վայրի վրա գտնվում ե ^{2/9}

ողի այն քանակության, վոր գտնվում է Յերկրի՝ հավասար մեծություն ունեցող մակարդակի վրա: Յեթե այդ ճիշտ է, ապա ծանրաչափը Մարսի վրա ցույց է տալիս 60 մմ. ձնշում (Յերկրի վրա 760 մմ.), իսկ ջուրն արդեն լեռում է 44⁰ ժամանակ (յերկրի վրա 100⁰ ժամանակ), Մենզելի վերջին հետազոտությունների արդյունքները հաստատում են այդ յեզրակացությունները և տալիս են ձնշման համար 50 մմ.: Մարդը գոյություն ունենալ չեր կարող այդքան նուրացած մթնոլորտում, յեթե մարդը տեղափոխվեր Մարսի վրա՝ կիբեռ, ինչպես խորունկ ծովի ձուկը վոր հանված է ծովի յերեսը, և արնաքամ կլիներ մարմնի ներքին ձնշումից՝ արյունատար անոթների պատերից դուրս մղված արյան հետևանքով:

Շատ կարևոր է իմանալ Մարսի մթնոլորտի բաղադրությունը: Պարունակում է նա արդյոք, կենսարար թթվածին: Կա, արդյոք, այստեղ իներս բորակածին: Մեր ձեռքին կա յերկնացին լուսատունների քիմիան ուսումնասիրելու վստահելի յեղանակ—այսպես կոչված սպեկտրալին վերլուծություն, վոր հիմնված է լույսի տարրալուծման վրա: Նրա միջոցով ենք իմացել արեի, աստղերի և ամենահեռավոր միգամածությունների բաղադրությունները: Սակայն Մարսի նկատմամբ գործադրել այդ միջոցը շատ դժվար է: Զե վոր այն լույսը, վարով մոլորակը լուսավորում է, իր բնական լույսը չե, այլ արեի ճառագայթների լոկ անդրադառնում է: Այդ պատճտուով վորոշել թե ինչ նյութերից է կազմված Մարսի մակլերենութը, անկարելի յե: Այլ կերպ է մթնոլորտի բանը. այն ճառագայթները, վոր Մարսն անդրադառնում են, կրկնակի անցնում են նրա ողի շերտով, և ողը պետք է նրանց վրա իր կնիքը դներ: Սակայն Մարսի մթնոլորտի ազդեցությունը իր սպեկտրի վրա յերկան հանելու բոլոր փորձերը յերկար ժամանակ վճռական հետևանքներ չելին տալիս: Յեկ հասկանալի յե, թե ինչու. չե՞ վոր Մարսի ճառագայթ-

ները մեզ մոտ գալու ճանապարհին, բացի իր սեփական մթնոլորտից, կտրում են նաև մեր ողի խիստ հաստ շերտը: Ուստի դժվար է իմանալ Մարսի ոդային շերտի աննշան արտահայտումը՝ Յերկրի շերտի խիստ ներգործության տակ:

Հազիվ միայն 1924 թվին, շնորհիվ ուսումնասիրության հատուկ յեզրակներ կիրառելուն, Մարսի մթնոլորտի կազմի ուսումնասիրության գործում հաջողվեց առաջին հաջողությանը համար: Առաջին հերթին ապացուցվեց, վոր նա պարունակում է թթվածին, սակայն քանակությամբ մերինից շատ նվազ. այսինքն՝ Մարսի յուրաքանչյուր վայրի վրա գտնվում է միայն 15% գազի այն քանակության, վորը գտնվում է Յերկրի՝ նույնքան մակարդակ ունեցող վայրի վրա: Այս հաստատում է Մարսի մթնոլորտի նոսր լինելու յենթագրությունները:

Այնուհետև պարզվեց, վոր Մարսի մթնոլորտը խիստ չոր ե. Նրա մեջ Յերկրի վրա գոյություն ունեցող ջրային գոլորշինների միայն 5% ե յերեան բերած: Այդպիսով, Մարսի վրա անտարակույս, ջուր կա, բայց շատ ավելի պակաս, քան Յերկրի վրա: Սակայն այդ նախագուշակում ելին առաջ: Բանն այն ե, վոր մեր մոլորակի վրա ովկիանոսների ջրային հարթ տարածությունը կազմում է մակերեսի $\frac{2}{3}$ -ը, իսկ մնացած մի յերը օրդ տարածությունը նույնպես ամենուրեք չոր չե: Մինչ գեռ Մարսի մութ ծովերը կազմում են նրա մակարդակի $\frac{1}{6}$ -ը միայն: Բացի դրանից, նրանք իսկական ջրի ավաղաններ չեն, այլ սոսկ համեմատաբար խոնավ վայրեր, թեև այդ հարցը գեռ վերջնականապես լուծված չե: Սակայն լիովին հաստատված է, վոր կարմիր-դեղնավուն շրջանները, վորոնց բաժին ե ընկնում մակերեսի $\frac{5}{6}$ -ը, անջրդի անապատներ են: Այդպիսի չորացած, մեռած տարածություններ կան նաև Յերկրի վրա, բայց նրանք մեզ մոտ փոքր տեղ են բռնում: Իսկ Մարսը գրեթե ամբողջովին դրանցով ե ծածկված:

Դեռ վազուց չե, վոր ամպերը Մարսի վրա հազվագույն բան ելին համարում: 1924 թ. կատարած ուշադիր դիտումներ ցույց տվին, վոր այդ բնավ ել այդպես չե: Անցրած հանդիպակցության ժամանակ ամպամածություն նկատվում եր գրեթե ամբողջ ժամանակ և սկավառակի բոլորակի փայլուն ու մութ կեսերի սահմանին ունելին յերբեմն դուրս ցցված մասերի տեսք, յերբեմն՝ գեղին և սպիտակ բծերի, յերբեմն՝ պարզապես պղտոր ծածկոցների, վորոնք դիտողների աշքերից մոլորակի գետինը ծածկում ելին: Բեկուարին հալչող բծերի շուրթերին յերեսում ելին գեղնավուն մառախուզներ, հաճախ ամբողջ բեկուային շրջանը ծածկում եր ամպերի զանգվածներով Մակերեսի վորոշ խիստ մանրամասնություններ հանդիպակցության ամբողջ ընթացքում անտեսանելի ելին: Ակներեւ ե, վոր բոլոր ժամանակ նրանց ամպեր ելին պատեր:

Հետաքրքրական ե ամպերի շարժումների դիտողությունը: Նրանք մեկ ժամում 15—30 կիլմ. արագությամբ: Են ընթանում: Նրանց ձանապարհը ուղիղ չե, այլ կոր, նույնիսկ պարուրածև վոլորված: Այդ նշանակում ե, վոր Մարսի, ինչպես և Յերկրի քամիները պտտվում են հսկայական մըրիկներով-ցիկլոններով: Պիտի նկատել, վոր ընդհանրապես, Մարսի վրա ամպերը դարձյալ շատ պակաս են քան Յերկրի վրա և նրա մթնոլորաը շատ ավելի թափանցիկ ե, քան մերը: Պարզ չե, արդյոք, դիտված ամպերը խտացած գոլորշու զանգվածներ են, ինչպես մեզ մոտ թե քամու բարձրացրած ավագ և փոշի յեն: Շատ գիտնականներ հակվում են հոգուած վերջին յենթադրության:

Այդպիսով, մենք կարող ենք պարզ գաղափար կազմել Մարսի կլիմայի մասին: Յուրաքանչյան կլիմա յե այդ, դաժան ու յերկար ձմեռներով և ջերմության խիստ տատանումներով: Հեռափոր արեւ կարողանում ե յերեկը մի փոքր

յերմացնել հողը, վոր բավական տաքանում ե: Դրա փոխարեն, գիշերը նոսրացած ողը հնարավորություն չունի պաշտպանելու մոլորակը տիեզերական տարածության ցրտից և լուսաղեմին նույնիսկ արևադարձային գոտին շղթայվում ե խիստ սառնամանիքներից: Միայն բևեռալին շրջաններն ամառավին անընդհատ ցերեկվա ընթացքում ավելի մեղմ պայմաններ ունին շնորհիվ մայր չմտնող առելի ճառագայթների:

Մարսի ողը նոսր և չոր ե: Այնտեղ տեղի յեն ունենում խիստ փոթորիկներ, վորոնք, անցնելով ջրազուրկ անապատների վրայով, փոշու ամպեր են բարձրացնում և նուրբ ու չոր փոշով հսկայական տարածություններ պատում: Իսկական ամպեր ու մառախուզներ, կազմված ջրային կաթիներից, համեմատաբար, հազվագյուտ են և առաջանում են սակագաթիվ խոնավ վայրերում, սառցացած բեկունների մոտից: Անձրեւ, ձյուն, կարկուտ հազիվ թե տեղան Մարսի վրա, սակայն ցողն ու յեղամը սովորական յերեսություն:

Վորպեսզի յերկնալին մարմնի վրա հնարավոր լիներ կյանքը, անհրաժեշտ ե հետեւյալ յերեք պայմանների իրագործումը. 1. պետք ե ջուր լինի, 2. պետք ե ող լինի և 3. բարեխառնություն պիտի լինի վորոշ սահմաններում: Այդ բոլորը խիստ հասկանալի յե: Զուրը լցնում ե մեր ամբողջ մարմինը, հիմք ե կազմում նրա մեջ յեղած հեղուկ հյութերի: Բացի այդ՝ յենթադրվում ե նաև, վոր կյանքը ծնունդ ե առել ջրի մեջ: Մթնոլորտը նրա համար ե, վոր ջուրը պաշտպանի գոլորշիացումից, նույնպես և կենդանի արարածների շնչառության համար: Վերջապես՝ բարեխառնության պայմաններն անհրաժեշտ են, վորով հետև այն նյութերը, վորոնցից կազմվում ե կենդանիների ու բույսերի մարմինները, քայլայվում ու ածխանում են շատ խիստ ջերմությունից ու սառչում անչափ ցրտից:


Մենք համոզվեցինք, վոր Մարսի վրա բոլոր այդ

պայմաններն իրագործված են. Այստեղ ջուր կա, ոդ կա, իսկ բարեխառնությունն այնքան ել շատ չի տարրերվում Յերկրի բարեխառնությունից: Նշանակում է Մարսը պիտանի յե քնակության համար: Ճիշտ է Յերկրի վրա աճող բույսերից քչերը կկարողանային դիմանալ Մարսի կլիմա. յական խստություններին, իսկ այդ մոլորակի ֆլորան պետք է վարժվեր ոգտվելու ցերեկվա ջերմությունից և չվախենալու գիշերացին սառնամանիքներից: Գրեթե բոլոր գիտնականները համաձայն են այն հարցում, վոր Մարսի վրայի մթին կետերը խոնավ վայրեր են, ծածկված բուսականությամբ: Բանն այն է, վոր ամառը նրանք մուգկանաչ գույն են ունենում, իսկ աշնանը դեղնում են և մինչև մուս գարուն շագանակագույն են մնում: Գույների այդ փոփոխության մեջ կարելի յե հեշտ կերպով տեսնել սաղարթների գարնան փթթումը և աշնան թոշնումը: Ի՞նչ բույսեր են դրանք — ծառեր, մացառուտներ, խոտեր կամ թե մեղ բոլորովին անհայտ տեսակներ — ներկայումս դժվար է այդ ասել: Մատնանշենք միայն, վոր Կորլեզից հիմնված Մարսի ջերմության նկատմամբ կատարած իր ուսումնասիրությունների վրա, յենթադրեց, վոր կանաչ տարածությունները մամուռի վերնախավեր ու չոր տափաստաններ են:

4. ԶՐԱՆՑԲՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԸ

1877 թ. իտալական նշանավոր աստղագետ Սկիապարելին վողջ աշխարհին զարմանք պատճառող մի գյուտ արագ: Աւշադրությամբ դիտելով Մարսի մակերեսը՝ նատեսավ ուզիղ հարթ գծեր, կարծես քանոնով քաշած, վորոնք ժիացնում եին միջանց «ծովերը», «լճերը» և մուտքակի այլ մթին կետերը: Հեռանալով և կտրելով իրարամեն մի ուղղությամբ, անցնելով նույնիսկ ծովերի մութմակերեսով, նրանք կազմում եին խիտ ցանց, վորը պատում եր ամբողջ մոլորակ:

Այդ գծերի տեսքն այնքան կանոնավոր է, նրանց համակարգությունն՝ այնքան յերկրաշափական, վոր նրանց չի կարելի համեմատել Յերկրի վրա յեղած բնական և վոչ մի ձևակերպության հետ: Մրանք վոհ գետեր են, վոհ ձեղքվածներ, վոհ լեռներ: Միայն մարդու ձեռքով ստեղծված արհեստական կառուցվածքները կարող են համեմատվել այն բանին, ինչ վոր մենք տեսնում ենք Մարսի վրա: Այդ պատճառով Սկիապարելին իր գտած գծերը ջրանցքներ անվանեց և այդ անունը նրանց նկատմամբ պահպեց: Բայց յեթե կան ջրանցքներ, ապա պիտի լինեն և կառուցողներ, վոր նրանց ստեղծել են: Այստեղից ծագեց Մարսի վրա բանական արարածներ լինելու միտքը: Սկիապարելիուց հետո շատերն ուսումնասիրեցին ջրանցքները, բայց առանձապես նշանավոր են ամերիկան աստղագետ Լուիլլի աշխատությունները: Արիզոնի չոր անա-



Նկ. 4 Մարսի «ջրանցքներ»
(Հատ Սկիապարելիի նկարի)

պատռմ, բարձր սարահարթի վրա, վոր յերկար վորումներից հետո ընտրվեց իրեն ավելի հանդարած և ջինջովով մի վալր, նա շինեց իր՝ ներկայացումս ամբողջ աշխարհին հայտնի, աստղագիտարանը: Այդ աստղագիտարանն ուներ հրաշալի հեռադիտակ՝ 24 մատնաչափ որյեկտիվով:

Այստեղ կովելին ու իր ոգնականները տարիներով ուսումնափրում եյին Մարսը և չափազանց կարեռը յեղրակացությունների հանգան:

Կովելին ընդամենը դիտեց ավելի քան 400 ջրանցք: Նրանց լախությունը շատ տարեր ե՝ ակնբախ լայն շերտերից սկսած՝ մինչև հազիվ նկատելի թելեր: Մի քանի ջրանցքների իրական լախությունը հասնում է 300 կիլո: Մինչեւ ամենանեղերը, վոր հնարավոր յեղավ նկատել, ունեն մոտ յերկու կիլո: տրամագիծ: Նույնքան ել տարեր և նաև ջրանցքների յերկարությունը: Մի բանիսը կարձ են, մոտ 400 կիլո: յերկարություն ունեն, մրուները ձգվում են հազարավոր կիլո: Յեզ այդ ամբողջ յերկարությամբ, ջրանցքներն ունեն խիստ կանոնավորություն և միաձեռություն: Ջրանցքը յերեք անապատում չի ընդհատվում: Նա միշտ անցնում ե ծովից-ծով, կամ թե միանում ե ուրիշ ջրանցքի հետ: Շատ հաճախ ջրանցքներից մի քանիսը հանդիպում նն միմյանց միենուին կետում, վորն այդ գեպքում նշված ե սև շրջագծով: Այդ յուրատեսակ հանգուցալին կայարաններն «ովազիսներ» անունն ստացան: Սրանք Մարսի մակերեսի վրա խիստ բնորոշ ձևակերպություններ են: Մեր Յերկրի անապատներում հսկայական տարածությունների վրա ջուր չկա: Հազվագեց կարելի յե հանդիպել աղբյուրների և ջրհորների, վարոնք շրջապատված լինեն արմավենիներով և կոկտուաներով: Կանաչի այդպիսի կղզիներն ավագի ծովի մեջ, ուր հոգնած ճանապարհորդը կարող ե առատ ջուր խմել և նորոգել իր պաշարը հետագա ճամբորդության համար, ովազիսներ են կոչվում: Յերկրի անապատներից այդ անունը փոխադրվեց Մարսի ցամաքած մակերեսի վրա:

Ջրանցքները միշտ չեն յերեռում: Այն կիսադում, ուր տվյալ վայրկանին ձմռան կատաղի սառնամանիք ե, այդ ջրանցքները բնավ չեն յերեռում: Բարեբեր դարնան

գալով՝ բեեռային սառուցներն սկսում են հալվել և, ինչպես վերեռում ասվեց, շրջապատվում են մուգ շերտով: Հենց այդ շերտաից ել սկսվում ե աճել ջրանցքների համակարգությունը: Նրանք յերեռում են մեկը մյուսի յետեից և սկսելով բեկեռին ամենամոտիկ տեղից, տարածվում են ամբողջ մոլորակի վրա, կտրում են հասարակածն ու անցնում հակառակ կիսագունդը: Զմեռն սկսվելուն պիս նըրանք դարձալ անհետանում են: Այդպիսով, Մարսի յուրաքանչյուր տարին յերկու անգամ դիտում ենք ջրանցքների տարողինակ ցանցի վերակենդանանալն ու վերածնվելը, վորն սկսվում ե յերբեմն մեկ, յերբեմն մյուս բեկվերից: Չի կարելի ազատվել այն մտքից, վոր ինչ վոր մութ, կարծես թե բեկեռային ձյան հալքի ջուրն ե հոսում այդ բարակ յերակներով: Հաջողվել ե նույնիսկ այդ ոտարութի «հոսանքի» արագությունը շափել: Կովելը վորոշում ե հոսանքի արագությունը մեկ ժամում $3^{1/2}$ կիլո: :

Ինչ բան ե այդ ոտարութի, յերբեմն վերակենդանացող, յերբեմն մարող գծերի ցանցը: Ի՞նչպես պետք ե բացատրել այդ խորհրդավոր գծերը մոլորակի կարմիր գեմքի վրա: Հրաշալի բացատրություն այդ բոլորին տալիս ե դարձյալ նույն կովելը: Նրա հրաշալի տեսությունը, վոր ներկայացնում ե քսանամյա հետազոտությունների ամփոփումը, հետևյալն ե.

Ինչպես մենք վերեռում տեսանք, Մարսի կիման շատ չոր ե: Զուր այնտեղ քիչ կա: Հազարավոր վերստերով ձգվում են չոր, մեռած անապատներ: Միայն «ծովերի» խոնավ տարածություններն են ծածկված զմրուխտանման կանաչով: Բայց միայն անխոս բուսականությունը չե, վոր ապրում ե Մարսի վրա: Այնտեղ կան նաև ուրիշ, այն ել չափազանց բանական, կուլտուրապես բարձր արարածներ: Կյանքը նրանց հեշտությամբ չի արվում ծարավից չորացող աշխարհի վրա, և նրանք հարկադրված են ծանր

պայքարել չորության դեմ։ Յեվ տհա այդ անծանոթ բը-
նակիչներն են կառուցել ջրանցքների վիթխարի համա-
կարգությունը, վոր անգին ջուրը տանում ե դեպի անկեն-
դան ավազուտները։

Միակը տեղը Մարսի վրա, ուր շատ ջուր ե կուտակ-
վում, թեև ճիշտ ե, պինդ վիճակում—բեեռներն են,
Գարնանը սառուցը հալչում ե, սկսվում ե հեղեղումը,
սակայն չոր ողի մեջ ջուրն արագ գոլորշիանում ե։ Իբ-
րև անտեսանելի գոլորշի անցնում ե նա խանձված անա-
պատով, չպարգևելով ծարավ հողին և վոչ մի կաթիլ ու
կրկին անշարժ նստում ե մյուս բեեռին։ Ահա այստեղ ե,
վոր բեեռային բծերի ծալրերին, բանական արարածները
տիրանում են խոնավության և այն ուղղում դեպի իրենց
արհեստական ջրանցքները։

Սակայն այն մութ բանը, վոր մենք տեսնում ենք
Ջրանցքների գծով հոսելիս, բնավ ջուր չե։ Զուրը բեեռից
հեռու չեր գնա, յերբ Ջրանցքներ բաց լինելին, քանի վոր
կշորանար անապատի մեջ, Բացի այդ, գծերի լայնությունը
շատ մեծ ե։ Լավ. Ջրանցքներ՝ 300 վերստ լայնությամբ։
Դրա համար պիտի կարծել, վոր Ջրանցքին իրեն մենք
յերբեք չենք տեսնում։ Ավելի շուտ դա փակ խողովակ ե։
Յերբ ջուրը խողովակով հասնում ե մի վորեւ տեղ, ոգ-
տագործում են այն շրջակա տարածությունները վոռոգե-
լու համար։ Յեվ այնտեղ, ուր առաջ մեռած եր և անա-
պատ, ջրի գալով կենդանանում ե։ Կանաչում ե հողը
և Ջրանցքի յերկու ափերին յերեան են գալիս մշակված
արտերի ակոսներ։ Հենց բուսականության այդ ակոսն ե,
վոր մենք տեսնում ենք իբրև «Ջրանցքի» մութ գիծ, և
վոչ թե ջուրն ենք տեսնում։ Ուրեմն, դիտելով խավար
գծերի տարածվող յերանգը, մենք տեսնում ենք վոչ թե
ջրի հոսանքը, այլ այդ հոսանքին հետևող բուշերը, վոր
այնպես ուշ հետեւում են այդ հոսանքին։

Նման մի բան տեղի յե ունենում նաև Յերկրի վրա։

Մեզ մոտ ել ամեն տարի հալչում են բևեռալին բծերը,
վորոնք, ի դեպ ասած, ծածկում են և կենինգրագը, և
Մոսկվան և գրեթե ամբողջ Յեվրոպան,—ընդհանրապես
բոլոր տեղերը, վորտեղ ձյուն կա։ Մեզ մոտ ել կանաչն
սկսում ե՝ ծածկելով ձունից նվաճած տարածությունները։
Իսկ Մարսի ու Յերկրի մեջ հսկայական տարբերություն
կա. մեզ մոտ կանաչ ալիքը թափալում ե հասարակածից
դեպի բեեռը։ Իսկ Մարսի վրա, ընդհակառակը, այդ ալիքն
ընթանում ե բեեռներից դեպի հասարակածը։ Յեվ հաս-
կանալի յե, թե ինչու Յերկրի վրա ձմռանը պակասում
ե միայն Արեւ և նրա վերադառնով գարնանն անմի-
ջապես սկսվում ե կյանքը։ Իսկ Մարսի վրա ջերմություն-
քից կա. պետք ե նաև բեեռային ձյունը հալչի և իր
կենսարար խոնավությամբ ըրի ձմռան քնած հատիկը։ Իսկ
ինչ տարբերություն մասշտաբի։ Մեզնում կանաչը լայն
փակում ե ցամաքի վրա, ծածկելով նրան միապաղաղ գոր-
գով։ Իսկ Մարսի վրա նա հազիվ առաջ ե շարժվում
Ջրանցքների արահետներով, այն ել բնակիչների ջանքերով,
արվեստական կերպով կառուցված Ջրանցքների։

Իսկ ինչ վերաբերում ե «ովազիմներին», Լովելի կար-
ծիքով զրանք արդյունաբերական կամ կուլտուրական կենտ-
րոններ են։ Հաջողվել ե նկատել, վոր ձմռանը, յերբ Ջը-
րանցքներն անհետանում են, ովազիմների տեղը փոքրիկ
կետ ե մնում։ Հենց այդ ե ինքը «քաղաքը», «բնակված
կենտրոնը»։ Ամառը նրա շուրջն ընդարձակ տարածության
վրա փոփում են մշակված արտեր, և ստացվում ե կանո-
նավոր մութ բիծ։

Հետաքրքրական ե նշել նաև հետեւալը. Մարսի վրա
լեռներ չկան։ Այդ հանգամանքը հենց հնարավորություն ե
տվել շինելու Ջրանցքների այդ ամբողջ ցանցը։ Մեզ մոտ,
Յերկրի վրա, գժվար թե հնարավոր լիներ այդ իրագոր-
ծել։ Իսկ յեթե Մարսի վրա բոլորի վիճակը հարթ ե, ապա
անհասկանալի յե, թե ինչն ե Ջրին ստիպում հազարավոր

կլմ. տարածություն հոսել: Զե վոր գետերի ջուրը շարժվում և բացառապես չնորհիվ լերկրի թեքության: Այդ պատճառով մարսեցիները վճէ սիախն ջրանցքներ պետք ե շինելին, այլ և այն մեքենաները, վոր ջուրը մղում են այդ ջրանցքների մեջ:

Այսպես ուրեմն, Մարսի վրա բնակվում են բանական արարածներ, վորոնք իրենց զարգացմամբ մեզնից բավական առաջ են անցել: Մենք չենք կարող, և լերբեք ել նրանց չենք կարողանա տեսնել, սակայն մենք տեսնում ենք նրանց հզոր կոլեկտիվ աշխատանքի վիճակի արդյունքները, վորոնք ամբողջ մոլորակի վրա խորը կնիք են դնում: Յեթե այդպես ե, տպա շատ ցավալի յե, վոր այդ արարածները հավանորեն պարապելով մեզ նման աստղագիտությամբ, և հեռվից ուսումնասիրելով մեր Յերկիրը, վոչինչ չգիտեն մեր՝ մարդկանցս գոյության մասին: Հիրավի, մենք վոչ մի այնքան խոշոր բան չենք ստեղծել, վոր հնարավոր լինեք հեռվից տեսնել: Բայց ինչ կարելի յե անել՝ մեր մասին ուրիշ մորորակների բնակիչներին իմաց տալու համար: Այս նպատակով առաջարկվում ենին զանազան ֆանտաստիկ նախագծեր: Որինակ՝ յենթագրում ելին, թե կարելի յե յերկրային անապատների վրա, կամ տափաստաններում ստեղծել հսկայական մթին շերտեր՝ հազարավոր վերստերի յերկարությամբ, Մարսի ջրանցքների նման մի բան: Յեզ վորպեսպի մարսեցիներն այդ գծերն իբրև պատահական բան չընդունեն, պետք ե այդ գծերից կազմվեր Պյութոպրոսի թեորեմայի հայտնի գծադրությունը: Այն ժամանակ մարսեցիներն, անկատկած, իբրև յերկրաշափության անտարակույս ծանոթ արարածներ, կհասկանան այդ նրանը և այդ նշանով ել կպատասխանեն: Այս նախագիծն անհնարին ե, վորովհետեւ Յերկրի մթնոլորտը շատ խիտ ե, ուստի անդրագարձնում ե արեի ճառագալթները: Այդ պատճառով հայտնի չե, յերեսում ե, արդոք, ուրիշ աշ-

խարհներին մեր մոլորակի գետինը, թե վոչ. գուցե նրա մանրամասնությունները կորչում են ողի վառ փայլի մեջ: Այսուհետեւ մատնանշում ելին ուղղիո-հեռագրի գործադրության հնարավորությունը, վորի անտեսանելի ալիքները, տարածվելով դատարկության մեջ, կարող են հասնել այլ աշխարհների: Յերեան յեկան նույնիսկ հաղորդագրություններ գաղտնի ազգանշանների մասին, վորոնք ստացվել ելին մի քանի կայանների կողմից և ուղարկված ելին մեզ Մարսի բնակիչներից: Սակայն հետազոտությունը ցուց է տալիս, վոր մեր հենց նույն մթնոլորտն արդպիսի հարաբերությունների համար խոչընդուն ե հանդիսանում: Անդրագարձնելով ուղիո ալիքները՝ նա նպաստում է Յերկրի վրա սգրանշաններ հաղորդելուն, բայց թուզ չի տալիս անցնելու նրանց դեպի տիեզերական տարածությունը:

Համենայն գեպս, այդ բանի համար մենք պիտի վոր ունենալինք վիթխարի ուժի ուղղիո-հեռագրական կայաններ: Ըստհանուր առումով, գեռ վաղ ե մտածել Մարսի հետ ունենալիք բանակցությունները գործնականորեն իրագործելու մասին:

Ահա, թե ընդհանուր գծերով ինչ են Լովելի տեսության փայլուն և գունագեղ հետևությունները: Յանկալի յեր, վոր այդ բոլորը ճշմարտություն լիներ: Բայց մեկ կողմ թողնենք յերեակայությունները. չե վոր մենք միայն հիպոթեզ յենթագրությունը շարադրեցինք: Յեզ այն ել այնպիսի մի յենթագրություն, վորի գեմ խիստ ծանրակշիռ, ուղղակի նրան սպառնացող առարկություններ են որպատճեն: Այս վերջինների քննությանն ենք անցնում հենց այժմ:

5. ՄԱՐՍԻ ԱՌԵՂՄԱՆԾԸ

Աստղագետ Անտոնիալին 1909 թ. դիտելով Մարսը Մեղոնի աստղագիտարանի (Ֆրանսիա) մեծ՝ 33 մատնաշափանոց հեռագիտակով, համոզվեց, վոր այդ գործիքով

բնավ ջրանցքներ չեն յերեում: Առաջ՝ աշխատելով փոքր մեծության խողովակներով, նա բազմաթիվ ջրանցքներ եր տեսնում: Իսկ ներկայումս, այնտեղ ուր փոքր խողովակների միջով յերեում ելին ուղիղ գծեր, դուրս յեկան անորոշ մոխրագույն շերտեր, ծուռ, անկանոն ձևերի գծեր, ցիրուցան ընկած բծերի, կետերի շարքեր, տարբեր յերանդներ ունեցող շրջանների սահմաններ և այլն, համեմայն դեպս միանդամայն ընական ձևակերպություններ, վորոնց համար բանականության մասնակցության պահանջ չկա:

Այդ հիման վրա Անտոնիադին վորոշեց, վոր հենց իրենք ջրանցքները միայն և միայն ցնորք են, տեսողության պատրանք, վորի պատճառը մեր աչքի հատկությունն եւ միացնել պարզ ձևերի մեջ զանազան ձևի գծեր ու շրջադեր, բծեր, վորոնք գտնվում են տեսանելի սահմանում: Գրեթե անտեսանելին տեսնելու իր միջով աչքը պարզեցնում եւ իր դիմաց յեղած պատկերը, վորին նպաստում եւ նաև մեր գիտակցությունը՝ ձգտել «գուշակելու» նկատած առարկաների ուրվագիծը:

Շատ շուտով գտնվեցին ապացույցներ այս հայտնաբերության համար: Դեռ շատ ավելի առաջ աստղագետ Բարենցիլը, վոր աշխատում եր Ամերիկայի Լիկուան աստղադիտարանի 36 մատնաշափանոց հսկայական հեռագիտակով, նույն միտքն արտահայտեց: Պրոֆեսոր Ֆրուսը, վորն ուսումնամիրում եր Մարսը Յուրիլյան 40 մանչափանոց հեռագիտակով, նույնպես ջրանցքներ չտեսավ: Վերջապես Արեկի հայտնի հետազոտող Գելլը, դիտելով Մարսը Վիլմըն լեռան աստղադիտարանի վիթխարի 60 մատնաշափանոց հեռագիտակով, տեսավ բազմաթիվ շատ փոքրիկ մանրամասնություններ, վորոնք Լովելին անմատչելի ելին մնացել, սակայն և վոչ մի ջրանցք չգտավ: Այդպիսով, այս գիտականները, վորոնք աշխատում ելին գոյություն ունեցող ամենախոշոր հեռագիտականերով (Լովելին հեռ դիտակն ուներ ընդունենք 24 մատնաշափով որյե՛շ-


տիվ), համաձայնեցին այն բանին, վոր ջրանցքներ գոյություն չունեն:

Այսուհետև հարցը քննեցին տեսականորեն, յեվ շատերը յեկան այն յեզրակացության, վոր ալղքան նուրբ գծերը, վոր Լովելը ջրանցքներ եր համարում, չեն կարող տեսանելի լինել ներկայիս հեռագիտականերով:

Սակայն ավելի սպանիչ ապացույց ջրանցքների գոյության դեմ՝ ներկայացնում են Անգլիայում Մարտինի յեվ Եվանսի փորձերը: Նրանք պատրաստեցին Մարսի նկարները պատշաճ մեծությամբ, բոլոր ծովերով, ովագիւներով և այն, բայց առանց ջրանցքների: Այսուհետև այդ նկարը նկարչության դասի ժամանակ մի դպրոցի աշակերտները յերեալ տվեցին արտանկարելու: Այդ աշակերտները յերբեք վոչինչ չելին լսել վոչ Մարսի յեվ վոչ ել նրա ջրանցքների մասին: Յեվ ահա յերեխաները, վորոնք նստած ելին առաջին նստարանների վրա և նկարը պարզ տեսնում ելին, արտանկարեցին այնպես, ինչպես վոր եր: Վերջին նստարանների վրա նստածները վատ ելին տեսնում և ինչ վոր մութ ուրվանկարներ նկարեցին: Իսկ նրանք, վորոնք նստած ելին կենտրոնում, և վորոնց համար նկարը գտնվում եր պարզ տեսանելիության սահմանում, նկարեցին մի քանի ուղիղ գծեր, և այդ գծերը, վորոնք բնագրի (իսկականի) վրա չկային, անցնում ելին հենց աճստեղով, վորտեղ աստղագետները ջրանցքներ ելին նկարում: Այդ փորձերն ամենալավ ապացույցն են աչքի՝ վերեւում նշած հատկության՝ վատ նկատելի առարկաները պարզ ձևերի մեջ միացնելու: Հետեւաբար Մարսի վրա յեղած ձևակերպությունների կանոնավոր յերկրաչափական ձեվերը բացատրվում են վոչ թե նրա բանական բնակչությունների ստեղծագործությամբ, այլ մեր տեսողության պակասավորությամբ:

Ի պատասխան այս առարկության, Լովելը հանդես բերեց իր առարկությունները: Նա կարծում եր, վոր յերեց իր առարկությունները:

Դժբախտաբար, այս անգամ ել չհաջողվեց գալ վորևէ վորոշ լեզրակացության։ Դիտողներից վուանք գարձալ նկատեցին այն նուրբ գծերը, վոր նկարագրում եյին Ակիասպարելիին ու Լովելլը. ուրիշները շարունակում են հերքել «Ջրանցքների» լերկրաչափական կանոնավորությունը։



Հետադաշտական լուս Ակիասպարելիի

160 մատնաչափանոց հեռաղիտակով դիտողություններ ցուց տվեցին խիստ նուրբ մանրամասնություններ։

թե փոքր յերեխաները կարող են սխալվել և այն, ինչ վոր թվում ե, իրականությունից տարբերել չեն կարող, ապա, այդ չի կարելի ասել փորձված ու զգուշ աստղագետների մասին։ Առհասարակ, նա մեծ արժեք ե տալիս փորձին ու վարժությանը այնպիսի նուրբ բաների ուսումնասիրության գործում, ինչպիսիք են ջրանցքները։ Մինչդեռ մեծագույն մասը հետազոտողների, վորոնք հերքում են դրանց գոյությունը, Մարսով մատնադիտուրեն չեն զբաղվել, այլ այն ընդմիջումներով են դիտել, ի միջի այսոց Բացի այդ, ճշմք կա մտածելու, վոր մեծ հեռաղիտակները կարող են այստեղ ավելի պակաս ոգտավետ լինել, քան միջակները։ Զե՞ վոր մեծ ոբյեկտիվի դիմաց մեծ ել ոդ ե գտնվում, ուստի ավելի պակաս հույս կա, վոր այդ ողը հանդարտ կլինի։ Ոդի հանդարտության տեսակետից, մեծ նշանակություն ունի նաև Լովելի աստղադիտարանի խիստ հարմարավոր գիրքը։ Ի վերջո տեսության հետևությունների առիթով նա հանդես բերեց մի շարք փայլուն փորձեր՝ նուրբ լարերի տեսանելիության նկատմամբ տարբեր հեռավորության վրա, վորոնք առանց վորեւ կասկածի ապացուցեցին, վոր տեսությունն այդ հարցում հասնում ե հետևանքների, վորոնք իրականությունից հեռու յեն, և աշքը կտտարելապես կարող ե տարբերել այնպիսի լայնություն գծեր, ինչպիսին ներկայանում են Յերկը փրայից՝ Մարսի վրայի ամենալրաբակ ջրանցքները։

Այդպիսով՝ Ջրանցքների մասին յեղած հարցը, դրա հետ նաև Մարսի վրա գոյություն ունեցած բանական կյանքը, անլուծելի առեղծված հանդիսացավ. Զարմանալի չե, վոր անհամբեր սպասում ելին 1924 թ. հանդիպակացության, լերբ Մարսն առանձնապես մոտ եր և լերբ նրա զաղանիքների դեմ գուրս եր հանված աստղային գիտության այնպիսի մի ուժեղ գործիք, ինչպիսին եր Մոռնտ-Վիլսոնի 100 մատնաչափանոց հեռաղիտակը։

Այսպես, որինակ «ծովերը» կարծես կազմված լինելին առանձին մասրիկ հատիկներից. ջրանցքների հարցում ել այստեղ չհաջողվեց վերջնական պատասխան ստանալ: Մեծ մասամբ ջրանցքները չելին յերեսում: Բայց յերբեմն նկատվում երին նրանց նման ուղիղ գծեր: Հստ յերեսութին կարելի յե հաստատված համարել, վոր ինչ վոր յերկար ակոսներ իսկապես գոյություն ունեն Մարսի վրա: Գունե կովելի աստղադիտարանում ստացած լուսանկարների վրա դուրս են յեկել մինչեվ 30 այդպիսի գծեր: Վեճն այն մասին ե միայն, այդ շերտերն ունին արդյոք այն զարմանալի կանոնավորությունը, վորը կարող երին ըստեղծել միայն բանական արարածները, թէ դիցուք համեմատաբար անկանոն ձևակերպություններ են՝ բնական ծագում ունեցող:

6. ՄԱՐՍ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Նախընթացից մենք իմացանք, վոր գիտությունը Մարսի բնության մասին բավական բան ե իմացել: Առանձնապես կարևոր ե այն, վոր այդ տեղեկությունների քանակը շարունակում ե լրանալ և լուրաքանչյուր հանդիպակացություն բերում ե նոր փաստեր: Այդպիսով, մեր հեռադիտակներով մենք հաղթահարում ենք տարածությունը: Սակայն այդ գեռ քիչ ե: Մենք ուզում ենք հաղթահարել և ժամանակը: Մենք ուզում ենք իմանալ, թէ Մարսը միշտ ե այդպես յեղել, ինչպես հիմա յե, և յեթե վոչ, ապա ինչու յե այդպես դարձել: Ինչու Մարսն այդպես չոր ե, մինչդեռ յերկիրը մեծ մասամբ ծածկված ե ովկիանոսների ջինջ ջրերով:

Կա մի աշխարհ, վորն իր բնությամբ Մարսից ավելի վատ ե—մեր կուսինը: Այդ սիրելի, բոլորին լավ ծանոթ յեվ բանաստեղծների ու սիրահարված զուգերի կողմից այնքան սիրված լուսատուն՝ չոր աստղագետների անս-

դոք վերլուծության հանդեպ կանդնեց իր վոչ այնքան ել բանաստեղծական դրությամբ:

Փոքրիկ քարե գնդակ ե, յերկրից չորս անգամ պակաս տրամագծով: Կան լեռներ, հովիտներ, ճեղքածներ: Բայց վոչ մի կաթիլ ջուր, ողի վոչ մի մասնիկ. հետեապես՝ վոչ մի կյանք: Կատարյալ լորություն, հավերժական մահ, անկենդան՝ քարի մի տիրալի աշխարհ: Ահա թե ինչ դուրս յեկավ կուսինը. բացի այդ, շատերը կարծում են, վոր յեթե ներկայումս այդ աշխարհն այդպիս անմիտար ե, ապա առաջ նա լի յեր շարժումով ու կյանքով: Այն մոխրագույն բծերը, վոր կուսինին ժպտացող անձունի կերպարանքի տեսք են տալիս, թերեւ յերեմն գոյություն ունեցող ծովերի հատակներ են: Սակայն ժամանակն անցավ յեվ կուսնի գունդը չորացավ, կորցրեց իր ողն ու անշնչացավ:

Այդ ժամանակ մի ծանր միտք ե առաջ գալիո. չի սպասում արդյոք, նույն վիճակը նաև Յերկրին: Յերկիր — Մարս — կուսին, չեն ներկայացնում արդյոք, այդ յերեք, իրենց բնությամբ այդքան տարբեր, աշխարհները, մոլորակների աստիճանական չորացման յերեք տարբեր շրջաններ միայն:

Հստ յերեսութին հենց այդպիս ել ե: Ամեն մի մոլորակ զարգանում ե, ապրում ու մեռնում: Իր գոյության սկզբում շիկացած ինչպես Արել, նա աստիճանաբար սառչում ե և ծածկվում կոշտ կեղենով: Զուրը գաղափին վիճակից դառնում ե հեղուկ, զոյանում են ովկիանուներ: Այնուհետեւ սառած ջրերի մեջ սկզբնավորվում ե կյանքը: Իսկ հետո ջուրն ու ողն աստիճանաբար թողնում են ծերացող աշխարհը, և մնում ե միայն քարը:

Լովելին թվում ե, վոր կարելի յե նույնիսկ մարդկության պատմության ընթացքում նշմարել չորանալու այդ գասդաղ գործողությունը: Յերկրի վրա կան անպատճերի յերկու գոտիներ: Մեկը հուսախալին կիսա-

գնդում՝ պարունակում ե իր մեջ հսկայական Սահարան, Սրաբիան, Ասիալի անապահները և Արիզոնը Ամերիկայում։ Մյուսը հարավային կիսագնդում՝ պարունակում ե Ավստրալիալի անապահները և Աֆրիկայի կալահարին։ Յեզ արդ գոտիներն աճում են։ Աստվածաշնչի մեջ Պաղեսափառ նկարագրվում է վորակես «ավետյաց յերկիր», վոր իր պտղաբերությամբ չուներ իրեն հավասար։ Ներկայումս այստեղ հողագործությունը դժվարությամբ ե հաջողվում։ Յերկիրը չորացել է, Աֆրիկալի հյուսիսային ափին մի ժամանակ կար հոչակավոր կարթողեն քաղաքը։ Զուրն այնտեղ հոսում եր հեռվից՝ հսկայական ջրանցքով։ Այդ ջրանցքի ավերակները պահպանվել են մինչև այսոր։ Սակայն անհետացել են այն աղբյուրները, վորոնց ջրերը նրանց միջով հոսել են. անապատը նվաճել ե այդ տարածությունը։

Այս կարծիքին բոլորը համաձայն չեն։ Ընդհակառակը ուշադիր հետազոտողներից շատերը կարծես թե ցուց են տալիս, վոր կլիման բնավ չի չորանում։ Բայց այդ միենույն ե։ Արդյոք չորացումն այնպես դանդաղորեն ե տեղի ունենում, վոր մենք չենք կարողանում նկատել, թե ընդհանրապես այդ գեռ չի սկսված, և առայժմս յերկիրը կորցնում ե միայն ողը, — միենույն ե, վախճանը կանխուցված ե։ Յերկիրը պետք ե չորանա։

Իսկ մեր կզնան մեղլըող ջուրն ուղղը, Մասամբ նրանք կթոշեն աթեզերական տարածության անհուն ընդարձակության մեջ։ Այդ այսպես ե տեղի ունենում։ Ողը, գորշշին, առհասարակ ամեն մի գաղ կազմված է բազմաթիվ անջատ մասնիկներից, — «մոլեկուլ»-ներից, վորոնք արագ շարժվում են զանազան ուղղությամբ։ Իրենց մըշտական արշավի ընթացքում նրանք հարվածվում են ամեն ուղղությամբ, բաղիվում են միմյանց կամ այլ առարկաների հետ և ոետինե գնդիկների պես յետ են թռչում։ Յեզ այդպես նրանք հավիտյան ալանում են։ Մի-

այն ցուրտը կարող ե նրանց խաղաղացնել, բայց այն ժամանակ գազը զաղարում է գազ լինելուց և վերածվում է հեղուկի։ Մշտական բաղխումների ընթացքում մոլեկուլների արագությունը փոխվում է, վոմանք թռչում են շատ լանդաղ, մուտաները շատ արագ։ Մյուս կողմից հայտնի յեթե նետենք վորեւ առարկա մի վայրկյանում 11 կիլմ. ավելի արագ, նա այլես յերկրի վրա յերբեք չի դառնա։ Նրա թռիչքի արագությունը կը հաղթահարի ընկնելու արագությանը։ Բաղիսման ժամանակ ողի մոլեկուլներից մի քանիսը կարող են առաջացնել մի վայրկյանում 11 կիլմ. ավելի արագություն։ Այն ժամանակ նրանք կարող են դուրս ընկնել մեր մթնոլորտից։ Իհարկե, այդ տեղի չի ունենա այն մոլեկուլի հետ, վորը գտնվում է ողի ստորին շերտերում։ Նա շատ շուտով կհանդիպի իր ընկերներին և նրանց կողմից յետ կմղվի։ Իսկ մթնոլորտի հենց սահմանների մոտ, զորտեղ ողը խիստ նոսրացած է, նման դասալզություն կատարելապես ննարավոր է։ Դրան նպաստում են հավանորեն և արևի ճառագայթները, վորոնք մղում են ալղբան փոքր իրերը ինչպիսիք են մոլեկուլները։ Յեթե ողը և ջրի մի մասը գոլորշու ձեռվ այդպես ցնդեն տարածության մեջ, ապա ջրի մյուս մասը կարող է ծծվել սառած Յերկրի ճեղքվածքներով ներս ու կանգ առնել այնտեղ՝ տարբեր նյութերի հետ միանալով։ Այսպես, թե այնպես, նրա մշտական կորուստը յերկրի կողմից կասկածից դուրս ե։

Կորքան փոքր ե մոլորակն, այնքան կարճ ե նրա կանքի ճամբան, այնքան արագ ե անցնում նա իր զարգացման բոլոր շրջանները։ Փոքրիկ կուսինն արդեն անց է կացըել իր կյանքը և հասել է վախճանական վիճակի։ Մարսը, վորը կուսինց մեծ է, իսկ Յերկրից փոքր, ապրում ե իր ծերության վերջին շրջանը, վորին կհետին մահը։ Մինչդեռ մեծ մոլորակ Յուպիտերը, վորը Յերկրից 11 անգամ մեծ տրամագիծ ունի, նոր միայն սկսում ե սառ-

չեւ իսկ մեծ հսկան Արեւ իր փայի ու զորության ծաղկման
շրջանն ե ապրում:

Ազգիսով, յերկրի տպագան մռայլ գույներով ե
պատկերանում: Մենք կարող ենք մեզ միմիթարել նրանով
վոր աշխարհների զարգացումը դանդաղ ե ընթանում:
Ավելի քան հարյուր հազարավոր, գուցե միլիոնավոր տա-
րիներ կանցնեն մինչև վոր Յերկիրը կզբկվի ջրից: Իսկ
այդքան ժամանակամիջոցում կփոխվի և կյանքը՝ Յերկրի
վրա: Արգեն վոչ թե մարդիկ, այլ ինչ վոր անիմանավի
արարածներ հսկայական բանականությամբ, արտասովոր
ընդունակությամբ մոլորակի վախճանին ականատեսներ
կլինեն և ով գիտի իրենց հրեշալին գերքաղաքականիրթու-
թյունը հնարավորություն չի տա նրանց՝ կյանքը շարու-
նակելու ու զարգացնելու նույնիսկ ոդն ու ջուրը կորցրած
Յերկրի վրա:



Հ. Ա. Խ. Հ. ՊԵՏՏԱՐԱՏ

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1.	Գաբրիելան Օ. — Միջատակեր բույսեր	20 կ.
2.	Լեքեղեգ Ե. Կ. — Ինչպես և առաջացել յերկիրը	30 »
3.	Գաբրիելան Օ. — Ովկիանի թագավորը	15 »
4.	Կարինցեգ. — Ելեքտրիֆեկտացիալի պիոներ Եղիսանը	
5.	Ելաշիչ Յեզ. — Կենդանական և բուսական աշխարհների փոխարարելակերներ	25 »
6.	Հարմանալիի ղենքեր	35 »
7.	Գաբրիելան Օ. — Ճագարամուկը, բուզների յետելց	25 »
8.	Հարմանալիի ճրագներ	25 »
9.	Նանսեն Քրիստօ — Գիշերվա խավարի և սառուցների մեջ հատ.	60 »
10.	Գաբրիելան Օ. — Մողենների աշխարհում	25 »
11.	Նանսեն Շ. — Գիշերվա խավարի և սառուցների մեջ հատ. II	75 »
12.	Կարինցեգ. — Դեպի անհայտ հեռաւներ	75 »
13.	Պիմենովա, Ե. Կ. — Արագայիկով գեղպի Գրենլանդիա	60 »
14.	Նեշանեզ Պ. Պ. — Ստորերկոյա ուժերի աշխատանքը	1 ր.
15.	Թուբակին Վ. Վ. — Բնության մեծ և ահեղ յերկութերը	75 կ.

Դիմել Հայզիրք ակց. լնկ. բոլոր գրախանութերին յեզ բաժանմունքներին.